



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**№ ԱԽ-2-Ո-1-Ա
2014թ.**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.**

նախագահությամբ՝ Ն.Նարիմանյանի,

մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ Լ.Ասրյանի, Մ.Ավանեսյանի, Ս.Արզումանյանի,
Գ.Գրիգորյանի, Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի,
Կ. Սադյանի, Մ. Սաֆարյանի, Մ.Ստեփանյանի,

քարտուղարությամբ՝ Ս.Ավետիսյանի

2014 թվականի ապրիլի 08-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում քննության առավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության խորհրդի /այսուհետ՝ Արդարադատության խորհուրդ/ կարգապահական հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Կարգապահական հանձնաժողով/ կազմը համալրելու մասին հարցը:

Արդարադատության խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԱԽ-6-Ո-1-Ա որոշմամբ հաստատվել է Կարգապահական հանձնաժողովի կազմը՝ Կ.Մաղյան-դատավոր, Կ.Մարդանյան-դատավոր, գործունեության ժամկետը համարելով 2013 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2014 թվականի մարտի 14-ը, Ս.Արզումանյան-իրավաբան՝ գործունեության ժամկետը համարելով 2013 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 20-ը:

Նկատի ունենալով, որ Կարգապահական հանձնաժողովի դատավոր անդամների գործունեության ժամկետը լրացել է 14.03.2014թ., ուստի անհրաժեշտ է Կարգապահական հանձնաժողովի կազմը համալրել դատավոր անդամներով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արդարադատության խորհրդի երեք անդամից կազմված Կարգապահական հանձնաժողովը ձևավորվում է մեկ տարի ժամկետով: Կարգապահական հանձնաժողովի կազմը ձևավորվում է ռոտացիոն կարգով՝ հիմք ընդունելով խորհրդի անդամի ընտրության կամ նշանակման ամսաթիվը: Կարգապահական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են ավելի վաղ ընտրված կամ նշանակված խորհրդի անդամները: Արդարադատության խորհրդի անդամների ընտրության կամ նշանակման ամսաթվերի համընկնման դեպքում Կարգապահական հանձնաժողովի կազմը ձևավորվում է Արդարադատության խորհրդի անդամների ազգանունների այբբենական հերթականությամբ:

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասով և 81-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Արդարադատության խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կազմը համալրել ներքոնշյալ դատավոր անդամներով՝

-Մարատ Գարիի Ավանեսյան,

-Մհեր Սլավիկի Ստեփանյան:

2.Կարգապահական հանձնաժողովի դատավոր անդամների գործունեության ժամկետը համարել 2014 թվականի ապրիլի 08-ից մինչև 2015 թվականի ապրիլի 08-ը:

**ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ